ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament.am

Ապրիլի 13 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն նախագահ.

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով ՀՀ ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անունից Ձեզ եմ ներկայացնում «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում է՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Միքայել Մելքումյան)

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող Օրենքում լրացումներ կատարելու մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 6 էջ:

Հարգանքով՝
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament.am

13.04.2020թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 24/20

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 8-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը.

**Որոշեց՝**

ՀՀ ազգային ժողովի նախագահին ներկայացնել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածը լրացնել 4-րդ կետով՝.

«4. Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում:»:

*Հոդված 2.* Օրենքը լրացնել նոր 22.1 հոդվածով.

«Հոդված 22.1 Համավարակի հետանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնություն ստանալու իրավունքը և դրա տրամադրման կարգը

1. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնության իրավունք ունեն եկամտի այլ աղբյուր չունեցող առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները, երկկողմանի ծնողազուրկ երեխաները, միայնակ մայրերը, ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքները, ծերության նպաստի իրավունք ունեցող անձինք, որոնց տրամադրվող այլ նպաստների և սոցիալական աջակցության դրամական այլ օգնության գումարները նվազագույն աշխատավարձի գումարից պակաս են:

2. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնության ստանալու իրավունքը որոշում է տարածքային կենտրոնը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկությամբ:

3. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնություն նշանակվում է այն չափով որպեսզի նպաստառուի կողմից ստացվող այլ նպաստի կամ սոցիալական աջակցության դրամական այլ օգնության հանրագումարը հավասար լինի նվազագույն ամսական աշխատավարձի գումարին:

4. Համալսարանի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է մինչև արտակարգ դրության ավարտը, սակայն ոչ ավել, քան երեք ամիս ժամկետով:»:

*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «Պետական նպաստների մասին»
## ՀՀ օրենքում լրացումներ կատարելու նախագծի վերաբերյալ

ՀՀ Սահմանադրության համաձայն Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Օրենքի նախագծի նպատակն է համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում օժանդակել նպաստառու այն անձանց որոնց տրամադրվող այլ նպաստների և սոցիալական աջակցության դրամական այլ օգնության գումարները նվազագույն աշխատավարձի գումարից պակաս են: Ակնհայտ է, որ համաճարակի արդյունքում մի կողմից սահմանափակվում է քաղաքացիների տեղաշարժը, մյուս կողմից՝ մի շարք տնտեսվարողների աշխատանքը, ուստի նման պայմաններում առավել է կարևորվում պետության սոցիալական պարտավորությունը՝ անապահով քաղաքացիների նյութական նվազագույն կարիքները հոգալու գործընթացում:

Ուսումնասիրելով միջազգային փորձը, ակնհայտ է դառնում, որ համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու արդյունքում պետության կողմից ֆինանսական աջակցության տարբեր եղանակներ են կիրառվել նաև այլ երկրներում:

# Տեղեկանք

## Փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 18. Հրատապ օգնության տեսակները և տրամադրման հիմքերը

1. Հրատապ օգնության տեսակներն են՝
1) միանվագ հրատապ օգնությունը.
2) եռամսյակային հրատապ օգնությունը:
2. Միանվագ հրատապ օգնությունը տրամադրվում է՝
1) ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում.
2) ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում.
3) ընտանիքի անդամի մահվան դեպքում:
3. Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:
4. Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում:

Հոդված 22.1 Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնություն ստանալու իրավունքը և դրա տրամադրման կարգը

1. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնության իրավունք ունեն եկամտի այլ աղբյուր չունեցող առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները, երկկողմանի ծնողազուրկ երեխաները, միայնակ մայրերը, ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքները, ծերության նպաստի իրավունք ունեցող անձինք, որոնց տրամադրվող այլ նպաստների և սոցիալական աջակցության դրամական այլ օգնության գումարները նվազագույն աշխատավարձի գումարից պակաս են:

2. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնության ստանալու իրավունքը որոշում է տարածքային կենտրոնը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկությամբ:

3. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնություն նշանակվում է այն չափով, որպեսզի նպաստառուի կողմից ստացվող այլ նպաստի կամ սոցիալական աջակցության դրամական այլ օգնության հանրագումարը հավասար լինի նվազագույն ամսական աշխատավարձի գումարին:

4. Համավարակի հետևանքով արտակարգ դրություն հայտարարելու դեպքում եռամսյակային հրատապ օգնությունը նշանակվում է մինչև արտակարգ դրության ավարտը, սակայն ոչ ավել, քան երեք ամիս ժամկետով: